ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅԼ ՊՈԼԻԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2021/1-1

ք. Երևան «04» «03» 2021թ.

Վիճակագրական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ս. Չունգուրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1017891 (մեկ միլիոն տասնյոթ հազար ութ հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցներր Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք

---

[1] *Եթե պայմանագիրը նախատեսում է մեկից ավել տափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ տափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (իրավունքներ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վիճակագրական կոմիտե	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, Ծ. Իսակովի 48/2
ՀՎՀՀ 02507509	ՀՎՀՀ 01505177
ՀՀ ՖՆ Գանձարանական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011011021	Հ/Հ 1930065750990100
Գլխավոր քարտուղար՝	Ընկերության տնօրեն՝
Ա.Հարությունյան ----------	Ս.Ջունգուրյան----------
(ստորագրություն)	---
Կ.Տ	Ստորագրություն
	Կ.Տ

Հավելված N 1
«04» «03» 2021թ. կնքված N 22 ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2021/1-1
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Միավոր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը /հազ.ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	Մարտ		II եռ.		III եռ.		IV եռ. /մինչև նոյեմբերի 30 ը/	
								քանակը	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակը	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակը	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակը	գինը /հազ. ՀՀ դրամ/
1	79821200-1	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Գրանցամատյան/	Չափերը՝ 60X84/8, էջերի տպագրությունը՝ 1 գույնով՝ 40 էջ, էջերի թղթի տեսակները՝ օֆսեթային՝ 80 գ/մ2, կազմի տպագրությունը և կազմի թղթի տեսակները՝ խրոմերզաց, 250 գ/մ2, մետաղակար հատվածում լիդերինապատում, կազմարարությունը՝ մետաղակար:	հատ	186	48.732	262	262	48.732						
12	79821200-12	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /1-ԳԻՆ ԳՅՈՒՂ/	A4 չափի տպագրություն, կազմված 5 թերթից, մետաղակար, որից 4 թերթը երկկողմանի, իսկ 1 թերթը միակողմանի միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա,	հատ	18	43.2	2400	600	10.8	600	10.8	600	10.8	600	10.8

13	79821200-13	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / 2-ԳԻՆ ԳՅՈՒՂ/	A3 չափսի երկկողմանի տպագրություն. միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 2 թերթից մետադակար, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	15.6	37.44	2400	600	9.36	600	9.36	600	9.36	600	9.36	
15	79821200-15	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-ԿՇ (ամսական)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.78	22.491	5950	1000	3.78	1650	6.237	1650	6.237	1650	6.237	
16	79821200-16	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև ԱԲՇ (ամսական)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.78	40.824	10800	2700	10.206	2700	10.206	2700	10.206	2700	10.206	
17	79821200-17	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև ՄՇ (ամսական)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.78	40.824	10800	2700	10.206	2700	10.206	2700	10.206	2700	10.206	
19	79821200-19	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-արտ (տարեկան)/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	7.8	23.4	3000							3000	23.4	

24	79821200-24	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Զև 1-Տրանսպորտ (տարեկան)/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	7.8	15.6	2000								2000	15.6
25	79821200-25	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Զև 13-ԿԱՊ (ամսական)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	4.2	8.568	2040	510	2.142	510	2.142	510	2.142	510	2.142
27	79821200-27	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Զև 6-Ֆ (եռամսյակային)/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	7.8	31.2	4000	1000	7.8	1000	7.8	1000	7.8	1000	7.8
28	79821200-28	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Զև 3-ֆ (տարեկան)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 3 թերթից մետաղակար, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	12.6	50.4	4000								4000	50.4
29	79821200-29	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Զև 1-առնտուր (ամսական)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց , օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.6	155.52	43200	18000	64.8	8400	30.24	8400	30.24	8400	30.24

32	79821200-32	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև N-3 առնտուր (տարեկան)/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 2 թերթից մետաղակար, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	15.6	59.28	3800								3800	59.28
35	79821200-35	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև թիվ 29-ԳՏՀ (ամսական)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.6	41.4	11500	8500	30.6						3000	10.8
37	79821200-37	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ցուցակ 2/	A3 չափսի կազմված 2 թերթից, որոնցից 1 թերթը երկկողմանի տպագրություն, 1 թերթը միակողմանի տպագրություն, մետաղակար, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	12.6	277.2	22000	22000	277.2							
38	79821200-38	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Տեղեկանք (ամսական) /	A4 չափսի միակողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.78	26.46	7000	7000	26.46							
40	79821200-40	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հարցաթերթ թիվ 1 (ամսական)	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 2 թերթից մետաղակար:	հատ	15.6	27.3	1750	1000	15.6	750	11.7					

41	79821200-41	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Հարցաթերթ թիվ 1 (տարեկան)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.96	48.312	12200							12200	48.312
42	79821200-42	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հարցաթերթ թիվ 2 ամսական/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	8.4	19.74	2350	1350	11.34					1000	8.4
Ընդամենը						1017.891			529.026		98.691		86.991		303.183

Կատարողը տպագրված նյութերը մատակարարում է ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական 3 տուն հասցեով:

՝ աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

՝՝ Տպագրման ծառայությունների մատուցման պարտադիր պայման է Պատվիրատուի կողմից կատարողին տպագրման վերջնաժամկետից առնվազն 30 օրացուցային օր առաջ հաշվետվական ձևերի նմուշների էլեկտրոնային տարբերակի տրամադրումը: Նշված ժամկետում Պատվիրատուի կողմից էլեկտրոնային տարբերակի չտրամադրման դեպքում չտրամադրված նմուշի տպագրման անհրաժեշտությունը բացակայում է:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վիճակագրական կոմիտե
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011011021
Գլխավոր բարտուղար՝

Ա. Հայրապետյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ
ք.Երևան, Ծ. Իսակովի 48/2
ՀՎՀՀ 01505177
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930065750990100
Ընկերության տնօրեն՝

Ս.Չունգուրյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«04» «03» 2021թ. կնքված N 22 ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2021/1-1
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

Հազ. 22 դրամ

հրավերով նախատես-ված չափաբաժ-նի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդա-մենը
1	79821200-1	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Գրանցամատյան/			48.732	48.732	48.732	48.732	48.732	48.732	48.732	48.732	48.732	48.732	48.732
12	79821200-12	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /1-ԳԻՆ ԳՅՈՒՂ/			10.8	21.6	21.6	21.6	32.4	32.4	32.4	43.2	43.2	43.2	43.2
13	79821200-13	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / 2-ԳԻՆ ԳՅՈՒՂ/			9.36	18.72	18.72	18.72	28.08	28.08	28.08	37.44	37.44	37.44	37.44
15	79821200-15	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Զև 1-ԿՇ (ամսական)/			3.78	10.017	10.017	10.017	16.254	16.254	16.254	22.491	22.491	22.491	22.491
16	79821200-16	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Զև ԱԲՇ (ամսական)/			10.206	20.412	20.412	20.412	30.618	30.618	30.618	40.824	40.824	40.824	40.824
17	79821200-17	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Զև ՄՇ (ամսական)/			10.206	20.412	20.412	20.412	30.618	30.618	30.618	40.824	40.824	40.824	40.824
19	79821200-19	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Զև 1-արտ (տարեկան)/										23.4	23.4	23.4	23.4

24	79821200-24	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-Տրանսպորտ (տարեկան)/										15.6	15.6	15.6	15.6
25	79821200-25	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 13-ԿԱՊ (ամսական)/			2.142	4.284	4.284	4.284	6.426	6.426	6.426	8.568	8.568	8.568	8.568
27	79821200-27	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 6-Ֆ (եռամսյակային)/			7.8	15.6	15.6	15.6	23.4	23.4	23.4	31.2	31.2	31.2	31.2
28	79821200-28	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 3-Ֆ (տարեկան)/										50.4	50.4	50.4	50.4
29	79821200-29	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-առևտուր (ամսական)/				95.04	95.04	95.04	125.28	125.28	125.28	155.52	155.52	155.52	155.52
32	79821200-32	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև N-3 առևտուր (տարեկան)/										59.28	59.28	59.28	59.28
35	79821200-35	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև թիվ 29-ԳՏՀ (ամսական)/			30.6	30.6	30.6	30.6	30.6	30.6	30.6	41.4	41.4	41.4	41.4
37	79821200-37	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Յուցակ 2/				277.2	277.2	277.2	277.2	277.2	277.2	277.2	277.2	277.2	277.2
38	79821200-38	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Տեղեկանք (ամսական) /			26.46	26.46	26.46	26.46	26.46	26.46	26.46	26.46	26.46	26.46	26.46
40	79821200-40	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հարցաթերթ թիվ 1 (ամսական)			15.6	27.3	27.3	27.3	27.3	27.3	27.3	27.3	27.3	27.3	27.3
41	79821200-41	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Հարցաթերթ թիվ 1 (տարեկան)/										48.312	48.312	48.312	48.312
42	79821200-42	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հարցաթերթ թիվ 2 ամսական/			11.34	11.34	11.34	11.34	11.34	11.34	11.34	19.74	19.74	19.74	19.74
Ընդամենը					187.026	627..717	627..717	627..717	714.708	714.708	714.708	1017.891	1017.891	1017.891	1017.891

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամորտական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վիճակագրական կոմիտե
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011011021
Գլխավոր քարտուղար՝

Մ. Հայրապետյան----------

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ
ք.Երևան, Ծ. Իսակովի 48/2
ՀՎՀՀ 01505177
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930065750990100
Ընկերության տնօրեն՝

Ս.Չունգուրյան----------

Ստորագրություն

Կ.Տ

Հավելված 3
«04» «03» 2021թ. կնքված N 22 ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2021/1-1
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանում	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«04» «03» 2021թ. կնքված N 22 ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2021/1-1
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն